«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱ ՔՈԼԵՋ»ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Խ Ո Ր Հ Ո ւ Ր Դ

ՈՐՈՇՈՒՄ N 42

«12» 02 2018թ. գ. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի և մանկավարժների պարգևատրման և նյութական իրախուսման կանոնակարգը (հավելված):

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____
(ստորագրություն)

Քարտուղար՝ ԱՆԺԵԼԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____
(ստորագրություն)

« ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ N 23լ

'01' 03 2018թ.

Ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ՈՒՄ
ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ պարբերության և 219-րդ հոդվածի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Տնօրենի և մանկավարժների պարգևատրման և նյութական խրախուսման կանոնակարգը» (հավելված):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ

(ստորագրություն)

Հաստատված է
«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի
201__թ. «_____» «____» N_____ հրամանով

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) միջոցների հաշվին Քոլեջի տնօրենին և մանկավարժներին (այսուհետ՝ Աշխատողներ) պարգևատրման և խրախուսման (այսուհետ՝ Խրախուսում) կարգն ու պայմանները և նպատակ ունի գնահատելու բարեխիղճ աշխատանքը, բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, կոլեկտիվում ձևավորելու առողջ մրցակցություն, ինչպես նաև մեծացնելու աշխատակազմի ներքին մոտիվացիան:

2. Աշխատողների Խրախուսման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային և հարկային օրենսգրքերով, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ընդունված իրավական ակտերով, Քոլեջի տնօրենի հրամաններով և սույն կանոնակարգով:

3. Սույն կարգով սահմանվում է նաև Քոլեջի աշխատողների Խրախուսման սկզբունքները, տեսակները, հիմքերը, Խրախուսման չափն ու պարբերականությունը, ինչպես նաև կանոնակարգում է Խրախուսման ամբողջ գործընթացը:

4. Սույն կարգը տարածվում է Քոլեջի ինչպես հիմնական, այնպես էլ համատեղությամբ աշխատողների վրա.

5. Աշխատողների Խրախուսումը կախված է աշխատողների արդյունավետ և բարեխիղճ աշխատանքից, մանկավարժների նկատմամբ ձևավորված ուսումնամեթոդական մասնագիտական խորհրդի, ամբիոնների, բաժնի վարիչների և առանձին դեպքերում նաև ծնողների կարծիքից, ինչպես նաև Քոլեջի բյուջեում այդ նպատակով գոյացած միջոցներից և այլ գործոններից:

6. Խրախուսման հիմնական սկզբունքներն են՝

ա) արդարությունը.

բ) հասցեականությունը.

գ) պատճառաբանված լինելը.

դ) խտրականության ցանկացած դրսևորման անթույլատրելիությունը.

ե) Խրախուսումն իրականացնել Քոլեջի բյուջեում տվյալ տարվա ընթացքում ձևավորված ֆինանսական միջոցների շրջանակներում:

Անթույլատրելի է՝

ա. բոլոր աշխատողներին միաժամանակ Խրախուսելը.

բ. Խրախուսման ժամանակ աշխատողի բարեխիղճ աշխատանքի, գործնական հատկանիշների և անձնային որակների հետ չկապված այլ հանգամանքները հաշվի առնելը (օրինակ՝ սոցիալական և ընտանեկան դրությունը (այս դեպքում աշխատողին կարող է ցուցաբերվել դրամական օգնություն), սեռը, տարիքը և այլն).

Ցանկանլի չէ՝

ա. սույն կարգի 7-րդ կետում նշված Խրախուսման միևնույն տեսակի և չափի կիրառումը Խրախուսման ենթակա բոլոր աշխատողների նկատմամբ:

II. ԱՇԽԱՏՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՉԱՓԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7. Աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել Խրախուսման հետևյալ տեսակները.

ա) շնորհակալության հայտարարում.

բ) միանվագ դրամական պարգևատրում.

գ) հուշանվերով պարգևատրում.

դ) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.

ե) կարգապահական տույժի հանում:

8. Խրախուսման վերը նշված տեսակները խիստ դասակարգված և կանոնակարգված չեն ըստ առաջնահերթության: Խրախուսման տեսակի ընտրությունը կատարվում է Քոլեջի տնօրենի հայեցողությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ աշխատողը ընթացիկ տարվա մեջ որերորդ անգամ է ներկայացվում Խրախուսման:

9. Առանձին դեպքերում, երբ անհրաժեշտ է արժևորել աշխատողի բացառիկ գործունեությունը (հանձնարարությունը կատարված է ժամկետից շուտ, գերազանց որակով և այլն), աշխատողի նկատմամբ կարող է կիրառվել մեկից ավելի Խրախուսման միջոցներ՝ օրինակ շնորհակալության հայտնում և միանվագ դրամական պարգևատրում և այլն:

10. Սույն կարգի 7-րդ կետի «դ» և «ե» ենթակետերում նշված Խրախուսման տեսակները կիրառվում են տարեկան ընդամենը մեկ անգամ, իսկ նույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված Խրախուսման տեսակները՝ ըստ անհրաժեշտության:

11. Խրախուսում կիրառելու հստակ կանոնակարգված պարբերականություն չի սահմանվում: Այն կարող է կիրառվել ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա կիրառման ձևով:

12. Սույն կարգի 7-րդ կետի «ա» ենթակետում նշված Խրախուսման դեպքում աշխատողին տրվում է Քոլեջի տնօրենի ստորագրությամբ և կնիքով վավերացված շնորհակալագիր:

13. Սույն կարգի 7-րդ կետի «բ» ենթակետում նշված խրախուսման դեպքում աշխատողին տրվող միանվագ դրամական պարգևատրության առավելագույն մեծությունը չի կարող գերազանցել տվյալ աշխատողի ամսական դրույքաչափի կրկնակին: Միանվագ դրամական պարգևատրությունը տրվում է ՀՀ դրամով:

14. Սույն կարգի 7-րդ կետի «գ» ենթակետում նշված Խրախուսման դեպքում աշխատողին հուշանվերով պարգևատրման դեպքում հուշանվերի գումարի չափը չի կարող գերազանցել տվյալ աշխատողի ամսական դրույքաչափի կրկնակին:

15. Սույն կարգի 7-րդ կետի «դ» ենթակետում նշված Խրախուսման դեպքում աշխատողին տրամադրվող լրացուցիչ վճարովի արձակուրդի տևողությունը չի կարող գերազանցել՝ 4 աշխատանքային օրը:

16. Մեկից ավելի կարգապահական տույժ ունեցող աշխատողի նկատմամբ որպես Խրախուսման միջոց կարող է կիրառվել ընդամենը մեկ կարգապահական տույժի հանումը, այն էլ տարեկան ընդամենը մեկ անգամ:

III. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՄԵԼՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

17. Աշխատողների Խրախուսման համար հիմք է հանդիսանում՝

ա) աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների գերազանց կատարումը.

բ)անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար տրված լրացուցիչ հանձնարարությունը ժամանակին և պատշաճ որակով կատարումը.

գ) Քոլեջում երկարամյա բարեխիղճ աշխատանքը.

ե) կոլեկտիվ և միջանձնային հարաբերություններում օրինակելի վարքագիծ դրսևորելը.

զ) աշխատանքային կարգապահությունը և այլն:

IV. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԸ (ԽՐԱԽՈՒՄԱՆ ՄԱՍՈՎ)

18. Աշխատողների Խրախուսման նկատմամբ սանկցիա է համարվում սույն կարգի 7-րդ կետում նշված Խրախուսման միջոցներից լրիվ կամ մասնակի զրկումը:

19. Մեկ տարվա ընթացքում սահմանված կարգով չմարված կամ չհանված կարգապահական տույժ ունեցող աշխատողը զրկվում է սույն կարգի 7-րդ կետում նշված Խրախուսական միջոցներից, բացառությամբ նույն կետի <ե> ենթակետում նշված՝ «կարգապահական տույժի հանում» Խրախուսական միջոցից:

20. Աշխատողը զրկվում է Խրախուսում ստանալու իրավունքից, եթե՝

ա) պարբերաբար թույլ է տալիս ներքին կարգապահական կանոնների խախտումներ,

բ) Քոլեջի ղեկավարության մոտ և կոլեկտիվում աշխատողի անձի նկատմամբ առաջացել է անվստահություն:

21. Սույն կարգի 20-րդ կետում նշված կարգապահական կանոնների խախտում է համարվում՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածում նշված պայմանները չկատարելը, ինչպես նաև՝

ա) քաղաքացիների սահմանադրական իրավունքները ոտնահարող գործողություններ կատարելը.

բ) իր և այլոց համար անօրինական եկամուտներ ստանալու կամ այլ անձնական դրդապատճառներով պաշտոնեական դիրքը օգտագործելը, ինչպես նաև կամայականություն դրսևորելը.

գ) կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները խախտելը կամ սեռական հետապնդումները աշխատակիցների, ենթակաների կամ Քոլեջի շահառուների նկատմամբ.

դ) ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելը.

ե) անհարգելի պատճառներով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատանքի չներկայանալը.

զ) ամսվա ընթացքում ընդհանուր հաշվով 8 ժամ անհարգելի բացակայությունը:

V. ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

22. Աշխատողների Խրախուսումն իրականացվում է Քոլեջի բյուջեում առկա միջոցների հաշվին:

23. Քոլեջի գլխավոր հաշվապահը, յուրաքանչյուր ամիս և ըստ անհրաժեշտության Քոլեջի տնօրենին է ներկայացնում հաշվետվություն բյուջեում առկա միջոցների մասին:

24. Քոլեջի աշխատողին Խրախուսման համար հիմք է ընդունվում Խրախուսման արժանի աշխատողի անմիջական ղեկավարի կողմից Քոլեջի տնօրենի անունով ներկայացված զեկուցագիրը, միջնորդությունը կամ առաջարկությունը:

25. Սույն կարգի 24-րդ կետում նշված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե աշխատողը չունի անմիջական ղեկավար կամ որի անմիջական ղեկավարը Քոլեջի տնօրենն է: Այդ դեպքում աշխատողը ներկայացվում է Խրախուսման առանց այդ փաստաթղթերի:

26. Սույն կարգի 7-րդ կետում նշված Խրախուսական միջոցները կիրառվում են նաև Քոլեջի տնօրենի նկատմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի կամ մարզպետի հանձնարարությամբ կամ առանց դրանց՝ տնօրենի հրամանով: